

«ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՊԷՏՍ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆՑ»*
(իմաստուն ասույթներ քարոզների համար)

261. Եղին զքեզ վերակացու՝ մի բարձրամտեր, այլ լեր իբրև զմի ի նոցանէ, զի ոչ ես դու լաւ քան զնոսա:
262. Քանի զօրեղագոյն է մարմինն այնքան ուժգնակի պատերազմի ընդ հոգոյն վասն այնորիկ յիմար է, որ այնքան զօրացուցանէ զմարմինն մինչ զի յաղթահարեացէ զհոգին:
263. Զգեցեալքն զծիրանիս ոչ կարեն զգենուլ զՔրիստոս:
264. Համարիս առնել շնորհ, զոր ինչ տաս ընկերին եթէ կամիս և եթէ ոչ՝ պարտական ես, զի զայն որ իւրն է խնդրէ Աստուած:
265. Կրօնաւորք պարտ են դատարիլ ի հպարտ շինուածոց, քանզի արդէն իսկ մեռեալ են յաշխարհի, վասն որոյ հարկ է նոցա առաւել գերեզման քան զապարան:
266. Միշտ սնուցանելի է ամօթխածութիւն, զի որքան մնասցէ հոգին է յոյս բարութեան, քանզի Նայ է սանձ, որով ողողէ ոք ի ճանապարհ երանութեան:
267. Ամենայն բարձրամիտ որդի է այնմ բարձրամտին որ ասաց. Եղից զաթոռն իմ յամսս և եղեց նման բարձրելոյն:
268. Մեծ գործ ունիս առաջի քո, ով մարդ. մահն հալածէ և կեանքն փախչի, հնարեայ ինչ քեզ աստ, զի մի անկանիցիս յորոգայք:
269. Մեղքն է վիրաւորիչ աստուածային մեծութեան և վնասակար եկեղեցոյ և տգեղացուցիչ աստուածային պատկերին:
270. Աստուած յօժարագոյն է առ ի յողորմիլն մեղաւորաց քան առ ի պատժիլն:
271. Ուր ատելութիւն է ոչ աղօթք, ոչ սրահք և ոչ ողորմութիւն առնէ օգուտ ինչ:
272. Ոչ կարէ սիրել զԱստուած, որ զպատկեր նորա ատիցէ, այսինքն՝ զընկերն:

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1990 թ. նո. նո. Ը—Թ-ից, 1991 թ. նո. նո. Ա—Բ—Գ-ից, Թ—Ժ-ից և 1993 թ. նո. նո. Դ—Ե—Զ-ից:

261. Քեզ վերականգնու կարգեցին՝ մի մեծամտացիր, այլ եղիր իբրև նը-
րանցից (ենթականերից) մեկը, քանզի դու ավելի լավը չես, քան նրանք:

262. Որքան զորեղագույն է մարմինը, այնքան ուժգին կերպով է պա-
տերազմում հոգու դեմ, այդ պատճառով հիմար է (նա), ով այնքան է զո-
րացնում մարմինը, մինչև որ ընկնի հոգին:

263. Ծիրանի հագածները չեն կարող զգեստավորվել Քրիստոսով:

264. Ինչ որ տալիս ես ընկերոջդ, համարում ես շնորհ արած լինել. եթե կամենում ես կամ ոչ՝ պարտավորված ես, որովհետև Աստված պահան-
ջում է այն, ինչ որ իրենն է:

265. Կրոնավորները պարտավոր են ձերբազատվել հպարտ շինված-
ներից, քանզի արդեն իսկ մեռած են աշխարհի համար, այդ պատճառով
նրանց առավել հարկավոր է գեղեզմանը, քան ապարանքը:

266. Ամոթխածությունը միշտ սնուցանելի է, որքան որ մնա հոգում,
բարության հույս է, քանզի նա է սանձը, որով ուղղում է որևէ մեկին դե-
պի երանության ճանապարհ:

267. Ամեն մեծամիտ որդին է այն մեծամտի, որ ասաց. «Իմ աթոռը
դնեմ ամպերի վրա, և լինեմ նման բարձրյալին»:

268. Ո՛վ մարդ, քո առջև մեծ գործ ունես, մահն հալածում է, իսկ կյան-
քը փախչում, քեզ համար այստեղ հմար գտիր, որպեսզի որոգայթի մեջ
չընկնես:

269. Մեղքը վիրավորանք է աստվածային մեծության հանդեպ, վնա-
սակար՝ եկեղեցու (համար) և տգեղացնողն է աստվածային պատկերի:

270. Աստված ավելի հոժար է մեղավորներին ողորմելու, քան պատժե-
լու:

271. Որտեղ ատելություն կա, ո՛չ աղոթքը, ո՛չ պահքը և ո՛չ ողորմու-
թյունը օգնել չեն կարող:

272. Չի կարող սիրել Աստծուն (նա), ով ատում է նրա պատկերը,
այսինքն՝ ընկերոջը:

273. Ընկերոջ մասին գաղտնի խոսելը քսություն է, իսկ ատելությունից
առաջացած խոսքը՝ բամբասանք:

274. Ո՛վ մարդ, Աստված պատրաստ է քեզ իմաստություն տալ, բայց
քո հպարտության պատճառով տեղ չունես այն ընդունելու:

275. Ովքեր կերակրվում են այլոց վարքից բամբասելով, հազնում են
նրանց մտով, (իսկ) ով հայտն է իրեն, ողբում է իր համար և ոչ ուրիշնե-
րի:

276. Խոհեմ և ույալ այրը հանդիմանվելիս չի տրտնջա:

277. Հոգևոր մարտի մեջ նախ պետք է մարտնչել ընդդեմ որկրամո-
լության, քանզի եթե նախ այն չընկրկի մյուս մոլորությունների դեմ, պա-
քարելն ընդունայն է:

278. Աքեղան ինքն իրեն չի պատկանում, այլ՝ Աստծուն և վանահորը,
այդ պատճառով արեղային չի կարելի հոգալ իր անձի մասին, այլ՝ ապավի-
նել Աստծուն և վանահորը:

279. Աքեղան, որ ցանկանում է առատապես կերակուր և հանդերձ ու-
նենալ, անարգում է ցանկալի երկիրը, որ նրան որպես վարձատրություն
տրվելու է վարքի, ծովկալության շնորհիվ:

280. Տրտնջացող արեղան արեղա երևում է, բայց արեղա չէ, թեպետ և
(արեղայի) տեսք ունի:

281. Զարմանալի չէ, երբ (որևէ մեկը) տեսնի անասուններին խոսն-

273. Քսութիւն է գաղտ խօսել զքնկերէ և կամ բարձրասանք է խօսիլ յառաջ եկեալ յատելութենէ:

274. Պատրաստէ Աստուած տալ բեզ իմաստութիւն, ո՛վ մարդ, այլ ոչ ունիս տեղի, որ ընդունիցիս զնա վասն հպարտութեան բո:

275. Որ կերակրին բարձրասանօք վարուց այլոց լազին մտլ մոցին, որ հայի զինքն՝ ողբայ զինքն և ոչ զայլս:

276. Այր խոհեմ և վարժ ոչ տրտնջեցէ յանդիմանեալ:

277. Ի հոգևոր մարտին նախ մարտնչելի է ընդդէմ որկրամոլութեան, քանզի եթէ ոչ նախ նայ յետ ընկրկեցի, ընդունայն է աշխատել ընդդէմ այլ մոլութեանց:

278. Աբեղայն ոչ է իւր, այլ՝ Աստուծոյ և հօր վանացն, վասն այնորիկ ոչ է պարտ աբեղային հոգսլ զանձն իւր, այլ՝ ընկենոլ յԱստուած և ի հայրն:

279. Աբեղայ, որ կամի առատապէս ունիլ կերակուր և հանդերձ, անարգէ զերկիրն ցանկալի, որ տուեալ լինէր նմա վարձ վասն խոշորութեան վարուցն:

280. Տրտնջող աբեղայն երկի աբեղայ գոլ, այլ ոչ է աբեղայ թէպէտ և զանն ունի:

281. Ով ոչ զարմանալի, որ տեսանիցէ զանասունս խօսեցեալ, քանզի աբեղայն է գրաստ Աստուծոյ, ըստ այնմ. Որպէս զանասուն համարեցալ¹⁰:

282. Նայ միայն տրտնջայ ընդդէմ ներողութեան Աստուծոյ, որ անգիտակ է գորութեան նորս:

283. Ծանիր, ով քրիստոնեա, թէ որպէս պարտիս սիրել զՔրիստոս, վասն զի ետ մարմին իւր ի կերակուր և զարիւնն ըմպելի և զհոգին ի զին և զվտակ կողին ի լուացումն:

284. Սէր աշխարհիս արգելու ի մէնջ զսէրն Աստուծոյ:

285. Ամաչեաց՝ փրկեցի, քանզի զամօթն պահէ զմարդն ի սահելոյ, և թէ սահեալ է և ունի զամօթ, արժանացի թողութեան:

286. Աստուած ամենայն ուրեք և ոչ ուրեք ոչ ի տեղոջ իմիք և ոչ ի բացեալ ի տեղոջէ իմիք ի վերայ նորայ և ի ներքոյ տորս և ի մէջ տորս և շորջանակի:

287. Էակք ամենայն յերիս բաժանին. է, որ շարժէ և ինքն անշարժ մնայ՝ որպէս Աստուած, եւ ոմանք, որ շարժին և շարժէ զայլս որպէս հոգի մարդոյն, զի ինքն մշտաշարժ է, և զգայարանսն շարժէ ի գործ, և եւ ոմանք, որ շարժին միայն ի շարժողաց և ոչ շարժեն զայլս որպէս քար, փայտ, երկաթ և այլ:

288. Պարտ է ծածկել զանհատութիւն մերոյս հաւատոյ զանհատոյցն, զի մի ծաղր լիցի և ի պարզամտացն, զի մի ի պատմաւս մոլութեան առնուցուն:

289. Զոր օրինակ հօր զերկաթն ցուրտ և սեւա միատրութեամբն իւրով նման ինքեան առնէ, տոյնպէս և Աստուած ի ձեռն հաւատոյն զմիատրեալսն ընդ նմա իւր նմանս առնէ:

290. Որք գմիայնականն օրինադրութենէ բունն հարկանեն, պիտոյ է նոցայ բոլորովիմք մեռանիլ յաշխարհի ի խաչ հանելով զմարմինս իրեանց կարեօք և ցանկութեամբ և կենդանի մնալով միայն Աստուծոյ:

291. Աստուած հաճն, որ չարշարեցան մարմնով և մարդկային էր

¹⁰ Սայ. ՀԲ 23:

լիս, քանզի արեղան Աստուծո զրասուն է, ըստ այն խոսքի, (որ) «(քո առջև) անասուն համարվեցի»:

282. Աստծուն ներող լինելու դեմ նա է տրտնջում, ով անգիտակ է նրա զորությանը:

283. Ո՛վ քրիստոնյա, իմացիր, թե ինչպես էս պարտավոր սիրել Քրիստոսին, վասնզի իր մարմինը տվեց որպես կեանքուր և արյունը՝ ըմպելիք, հոգին՝ որպես փրկագին, իսկ կողի վտակը՝ լվացում:

284. Աշխարհի սերը հեռացնում է մեզանից Աստուծո սերը:

285. Ամաչեց՝ (ուրեմն) կիրկվի, քանզի ամոթը մարդուն պահում է սայթաքելուց, իսկ եթե սայթաքել է և ամաչում է՝ թողության կարծանաճա:

286. Աստված ամեն տեղ է և ոչ մի տեղ, ոչ ինչ-որ մի տեղում է և ոչ բացակա ինչ-որ տեղից, նրա վրա է և սրա տակ, սրա մեջ և շուրջ բոլորը:

287. Բոլոր էակները երեքի են բաժանվում, (գոյություն ունի) որ շարժում է, բայց ինքն անշարժ է մնում՝ ինչպես Աստված, կան ոմանք, որ շարժվում են և շարժում ուրիշներին, ինչպես մարդու հոգին, որովհետև ինքը մըշտաշարժ է և զգայարաններին գործողության մեջ է դնում, և կան ոմանք, որ շարժվում են միայն շարժողներից և ուրիշներին չեն շարժում, ինչպիսիք քարը, փայտը, երկաթը և այլն:

288. Պետք է ծածկել մեր հավատի անհասանելիությունը անհավատներից, որպեսզի պարզամիտների համար ևս ծաղր չլինի, որպեսզի մոլորության առիթ չդարձնեն:

289. Ինչպես որ հուրը սառը և սև երկաթն իր հետ միավորությամբ իր նման է դարձնում, սուցակես և Աստված հավատի միջոցով իր հետ միավորվածներին իր նման է դարձնում:

290. Ովքեր միաշնչության օրենսդրությանն են անցնում, պարտավոր են ամբողջությամբ մեռնել աշխարհի համար, խաչ հանելով իրենց մարմինը (իր) կարիքներով և ցանկությամբ, բայց կենդանի մնալով Աստուծո (համար):

291. Բանն Աստված, որ չարչարվեց մարմնով՝ միաժամանակ և՛ մարդկային է, և՛ Աստվածային նրա բոլոր գործողությունները, որ տնօրենության մեջ են:

292. Միտքը երբ անգիտության և մոլորության մեջ է շրջում, ինչ-որ կերպ ծերանում է և նրա զորությունը՝ թուսամում, բայց երբ իմանալի լույսը ճառագայթում է նրա մեջ, նորոգվում է և իր գործերը կարող է իրականացնել:

293. Զի կարելի սարկավագներին, եկեղեցու սպասավորներին և ժողովրդին՝ քահանային հանդիմանել, եթե նույնիսկ (նա) մեղանշում է:

294. Որտեղ հավատ չկա, այնտեղ հոգի չկա, իսկ որտեղ հոգի չկա, այնտեղ կենդանություն գոյություն չունի, սպա ուրեմն բոլոր անհավատները մեռած են և նրանց մեջ հոգի չկա:

295. Ինչպես որ երկիրը արեգակից ջերմացած պտղաբերում է, այնպես և մարդը՝ ջերմացած Աստուծո սրտում առաքինության և արդարության պտուղ է ծնում:

296. Արդարները ոչ միայն հանդերձյալ կյանքում, այլև այստեղ քարի մրելտակներին ընկերակից և հաղորդակից են լինում: Իսկ մեղավորները այստեղ և հանդերձյալում պիտի տանջվեն և դեերի հետ դատապարտվեն այն կրթերի պատճառով, որոնց սիրեցին:

միանգամայն և աստուածային նորա ներգործություն ամենայն որ ի տնօրէնութեանն:

292. Միտք, յորժամ յանգիստութեան և մոլորութեան շրջի, կերպիս ինչ ծերանայ և զօրութիւն նորա թառամի, իսկ յորժամ լոյսն իմանալի ճառագայթէ ի նա, նորոգի և զգործս իր կարէ վճարել:

293. Ոչ է պարտ սարկաւագաց և սպասաւորաց եկեղեցւոյ և ժողովրդոց յանդիմանել զքահանայ թէ և մեղանշիցէ ևս:

294. Ուր ոչ է հաւատ, անդ ոչ է հոգի, և ուր ոչ է հոգի, անդ ոչ են կենդանութիւն, ապա ուրեմն՝ ամենայն անհաւատք մեռեալ են և ոչ գոյ ի նոսա հոգի:

295. Զոր օրինակ երկիր ջերմացեալ յարեգակնէ պտուղս ծնանի, այնպէս և մարդ, ջերմացեալ ի սիրտն Աստուծոյ, ծնանի զպտուղ առաքինութեան և արդարութեան:

296. Արդարքն ոչ միայն ի հանդերձելումն, այլ և աստ բարի հրեշտակաց ընկերակիցք և հաղորդակիցք լինին: Իսկ մեղաւորքն աստ և ի հանդերձելումն տանջեացին և ընդ դիւացն դատապարտեացին վասն կրիցն, զոր սիրեցին:

297. Յորժամ ամբարիշտ մարդիկք զսուրբս հալածեն զհինքեանս վնասեն և ոչ զսուրբս, քանզի զհինքեանս ի բաց որոշեն ի նոցանէ և ի սրբազան հաղորդութենէ նոցա, և այսու յայտ է, թէ անիրաքն ոչ են արժանի կցորդութեան սրբոց:

298. Ուր երկիւղ Տեառն է, անդ է և պատուիրանաց պահպանութիւն:

299. Անձնիշխան մարդ կշտամբանօք ոչ երբէք նուաճի, այլ մանաւանդ հակառակի ևս, այլ պարտ է սիրով և խոնարհութեամբ նուանցնոցանել զնայ:

300. Մի յանկարգ իբրև զհեթանոսս կոծ և աշխատանս դնիցէք ի վերայ մեռելոյն, զի որք միանգամ յուսոյ յարութեան ակն ունին և միանգամ գալլատեանն Քրիստոսի, չէ պարտ լալ զնոսա:

301. Մահն է որոշումն հոգոյ ի մարմնոյն, կենաց լուծումն, հոգոյ ի բաց վճարումն, անյայտ զնացք, կատարած կենաց ամենայն կենցաղոյս, քուն անզգայուն, քուն մշտնջենաւոր, մոռացումն ամենայն զգալեաց:

302. Եթէ ծուլանամք ի տունն Աստուծոյ մտանել և աղօթել, զիս'ող կարեմք զերեսս նորա տեսանել:

303. Տիրապէս և կատարեալ իմաստութիւն մտացն է հպել յԱստուած և յիմացականսն և առ ի նոյնն խոկալով զտեհչումն բորբոքել և այնու հալեցողութեամբ զքնաս, որ ի զգայութեանցս է հեշտութիւն, առել:

304. Ոչ է պարտ աշակերտին առ խրատս վարդապետին պարզամտութեամբ կեալ, այլ հարցաքննօղ լինել, տալ պատասխանի և զհարցումնոց լուծումնս ընդունել:

305. Զի թէ զամենայն առաքինութիւնս լիակատար ունիցի մարդ և, ընդ հրեշտակս հաւասարեալ կենդանոյն ի յերկինս վերանայցէ՝ ի հաղորդութենէ մարմնոյ և արեանն Տեառն, ի բաց կացցէ ճշմարտութեամբ ընդ Սատանայի ի ներքին սանդարամետացն կործանեցի:

306. Աղօթք է երկիւղ սանդարամետականաց, հալածիչ դիւաց, բեկումն Բեկիարայ, կործանիչ Բանասրկոյին և ամենայն արկածից նորա, լուծիչ և ամօթն կորստեան:

307. Գիտէ Սատանայ եթէ մեծ շնորհ առնու մարդ ի ժամ աղօթիցն,

297. Երբ ամբարիշտ մարդիկ հալածում են սրբերին, իրենց են վնասում և ոչ սրբերին, քանզի իրենց բացորոշում են նրանցից և նրանց սրբազան հաղորդակցությունից, և սրանով հայտնի է, որ անիրավները արժանի չեն սրբերի կցորդությանը:

298. Որտեղ Տիրոջ երկյուղն է, այնտեղ է պատվիրանների պահպանությունը:

299. Անձնիշխան (հանդուգն) մարդը կշտամբանքով երբեք չի նվաճի, այլ առավել կհակառակվի, բայց պետք է սիրով խոնարհությամբ նվաճել նրան:

300. Հեթանոսների նման անկարգ մի կոծեք և հոգություն մի թափեք մեռելի վրա, որովհետև ովքեր մեկ անգամ հարության հույսին և Քրիստոսի գալառյանն են ահնկալում, նրանց համար լաց լինել հարկավոր չէ:

301. Մահը հոգու բաժանումն է մարմնից, կյանքի ավերումը, հոգու հեռացումը, անհայտ ընթացքը, ամբողջությամբ վախճանը աշխարհիկ կյանքի, անզգայուն քուն է, քուն մշտնջենավոր, մոռացումը բոլոր զգացմունքների:

302. Եթե ծուլանում ենք Աստուծո Տուն մտնել և աղոթել, ինչպես կարող ենք Նրա դեմքը տեսնել:

303. Մտքի տիրական և կատարյալ իմաստություն է հպվել Աստծուն և իմացականներին և նույնի մասին խոկալով ձգտում բորբոքել և այդ հայեցողությամբ ատել այն ամենը, որ հեշտություն է զգայարանների մեջ:

304. Աշակերտը չպետք է ուսուցչի խրատները պարզամտությամբ ընդունի, այլ հարցաքննող լինի՝ պատասխան տա և հարցերի պատասխաններն ստանա:

305. Որովհետև եթե մարդ բոլոր առաքինությունները լիակատար կերպով ունենա, հրեշտակներին հավասարված կենդանի ժամանակ երկինք կկերանա՝ Տիրոջ մարմնի և արյան հաղորդությունով ճշմարտությամբ կհեռանա սատանայից և կկործանի սանդարամետականներին:

306. Աղոթքը սանդարամետականների երկյուղն է, դեների հալածողը, Բելիարի բեկումը, բանասրկուի և նրա բոլոր զավերի կործանողը, կորստյան լուծիչը և ամոթը:

307. Սատանան գիտի, թե մարդ աղոթքի ժամին մեծ շնորհ է ստանում, այդ պատճառով աղոթքի ժամին ջանում է ցնորել մարդկանց միտքը, որպեսզի գրկի շնորհներից, որ մարդ ստանում է մաքուր մտքով աղոթելիս:

308. Եթե փախչենք այս աշխարհի նեղությունների (մասին) խրատից և ապաշխարությունը հանձն չառնենք, հանդերձյալ կյանքում պիտի կորչենք, որովհետև հանդերձալում նեղությունն ստանց հույսի է:

309. Ինչպես ուսուցչի խրատը բացում է ուսանողի միտքը, սույնպես Աստուծո (պատճառած) նեղությունը բացում է մարդկանց միտքը:

310. Բոլոր հավատացյալները, ովքեր ի սկզբանե հանելի եղան Աստուծուն, բազում նեղություններով են անցել, ինչպես Արրահամը և այլք:

311. Որին որ սատանան ջերմեռանդ է տեսնում, հորդորում է չափից վեր մի բան անել, որպեսզի բարձրավանդակ տեղից գահավեժ անի նրան:

312. Որքան մեծագույն խողովով, ցանկասեր մտքերով նեղվում ենք, այնքան ջերմագույն աղոթքով պարտավոր ենք ընդդիմանալ, քանզի խորհուրդներն արմատախիլ անողներ չենք, այլ՝ ըմբշամարտողներ:

313. Հանախակի աղոթքը հանգցնում է մոլորությունների բոցը:

314. Քանքի սատանան այլ գործի [մասին] չի հոգում այնպես խափա-

վասն այնորիկ ջանայ ցնորել զմիտս մարդկան ի ժամ աղօթիցն, զի զըրկեսցէ ի շնորհացն, զոր առնոց է մարդ ի մաքուր մտօք աղօթելոյն:

308. Թէ փախնուցուր ի խրատու նեղութեանց աշխարհի այտորիկ և ոչ լանձն առնուցուր զապաշխարութիւն, կորնչիք ի հանդերձեալն, զի նեղութիւն հանդերձելոյն առանց ամենայն յուսոյ է:

309. Որպէս խրատ ուսուցչին քանայ զմիտս ուսանողին, սոյնպէս նեղութիւն Աստուծոյ քանայ զմիտս մարդկան:

310. Ամենայն հաստատեալք, որք ի սկզբանէ հաճոյ եղեն Աստուծոյ, անպին ընդ բազում նեղութիւնս որպէս զԱպրահամ և այլքն:

311. Զորս շերմեաւոր տեսանէ Սատանայ, յորդորէ առնել ինչ ի վեր քան զչափն, զի ի բարձրասանդակ տեղոջէ զահաւեժ արասցէ զնայ:

312. Որքան ծայրագոյն ամբոխմամբ գիշական խորհրդով նեղիմք, այնքան շերմագոյն աղօթիք ընդդիմանալ պարտիմք, քանզի ոչ եմք արմատաքի խօշք խորհրդոցն, այլ՝ ըմբշամարտք:

313. Յաճախ աղօթքն շիջուցանէ զքոց մոլութեանց:

314. Զի ոչ հոգայ զայլ գործ այնպէս խափանել Սատանայ որպէս զշերմեաւոր աղօթելն, և որքան հանդիսագոյն է աղօթքն, այնքան մեծագոյն է պատերազմն:

315. Որպէս բերդն լամենայն կողմանց պաշարեալ կարօտանայ միշտ պահպանութեան, նոյնպէս և մեք, որ եմք պաշարեալ ի դիւաց, ի մարմնոյ և լաշխարհէ, պարտիմք միշտ հսկել և աղօթել:

316. Մի համեմատեր զքեզ մեծագունիցն և մի փոքրագունիցն և ոչ մի ումեք, այլ՝ համարեա զքեզ անարգ քան զամենեւեւեան:

317. Դահիճ մեղատորաց է յախտեմական հուրն և որդն անքուն:

318. Աղօթքն կակղացուցանէ զԱստուած, և արտասուքն բոնադատէ մոռանալ զանօրէնութիւնս մեր:

319. Ամենայն որ մարդասէր է աստուածասէր՝ և ամենայն որ աստուածասէր և մարդասէր է:

320. Ոչ գիտեմք եթէ Քրիստոս սիրով ստացեալ լինի և ոչ արծաթով, սիրոյն լիցի պտուղ պատարագի, ապա թէ ոչ ոչ ինչ օգուիս արծաթով:

321. Դուռն ողորմութեան Աստուծոյ խոստովանողաց և ապաշխարողաց հանապազ բաց է:

322. Մարդիկք որք հոգոյ աշօք լանվախճան կեանսն Դայեցան, մինչդեռ ի մարմնի էին, փրկութեան հոգոյն ջանացին:

323. Առանց վարժման դժուարաւ կարեն մարդիկք բարոց ուղղութիւն ստանալ:

324. Չարչարեցաւ անչարչարելին չարչարելեան, և մեռաւ անմահն մահկանացուան, այսինքն՝ անչարչար Բանն Աստուած մեռաւ իւրով մարմնովն, վասն այտորիկ համարձակել ասել՝ Աստուած խաչեցաւ:

325. Զի մարմին և արին Տեառն արդարև ստոյգ ի բաւութիւն մեղաց է, սակայն ապաշխարելոցն և հեռացելոյն ի մեղաց, այլ ոչ միշտ թաւալեցելոցն ի մեղս:

326. Մշմարիտ իմաստունն այն է, որ ոչ միայն քանիք ուսուցանէ, այլև գործովք վարդապետեսցէ:

327. Լքութիւն, յանդգնութիւն, աներկիւղութիւն մայր է ամենայն չարեաց:

328. Որք զհոյր աստուածային սիրոյն յանձինս իրեանց վառեալ բորբոքեցին, աստի հեշտութեանս քարեալ մնալ սասցին:

նել, ինչպես ջերմեանդ աղոթելը, և որքան հանդիսավոր է աղոթքը, այնքան մեծագույնը՝ պատերազմը:

315. Ինչպես բոլոր կողմերից պաշարված բերդը պահպանության կարիք ունի, նույնպես և մենք, որ պաշարված ենք դեերից, մարմնից և աշխարհի կողմից, պարտավոր ենք միշտ հսկել և աղոթել:

316. Քեզ մի համեմատիր ավագագույնների, փոքրագույնների կամ որևէ մեկի հետ՝ այլ քեզ բոլորից անարգ համարիր:

317. Մեղավորների դահիճը հավիտենական հուրն է և անքուն որթը:

318. Աղոթքը կակղեցնում է Աստծուն, իսկ արտասուքը ստիպում է մոռանալ մեր անօրենությունները:

319. Ամեն ոք, որ մարդասեր է, (ուրեմն) աստվածասեր է, և ամեն ոք, որ աստվածասեր է, նաև մարդասեր է:

320. Չգիտենք, թե Քրիստոսին սիրով ենք շահում և ոչ թե արծաթով, թող պատարագը սիրո պտուղ լինի, ապա թե ոչ՝ արծաթով ոչինչ չես օգտուրվի:

321. Աստուծո ողորմության դուռը խոստովանողների և ապաշխարողների (սոջև) համապագ բաց է:

322. Մարդիկ, ովքեր դեռևս մարմնի մեջ հոգու աշքերով անվախճան կյանքին նայեցին՝ հոգու փրկության ձգտեցին:

323. Առանց վարժության մարդիկ դժվարությամբ են կարող քարու ուղություն ստանալ:

324. Անշարժարելի չարչարվեց չարչարելիով, և անմահը մեռավ մահկանացուով, այսինքն անշարժար Բանն Աստված մեռավ իր մարմնով, այս պատճառով համարձակվում է անել. Աստված խաչվեց:

325. Որովհետև Տիրոջ մարմինը և արյունը արդար և ստույգ քավություն է մեղքերի, սակայն ապաշխարողների և մեղքից հեռացողի, բայց ոչ մեղքի մեջ միշտ թավալվողների համար:

326. Ծշմարիտ իմաստունը նա է, որ ոչ միայն խոսքով է ուսուցանում, այլև գործով է վարդապետում:

327. Լիբությունը, հանդգնությունը, աներկյուղությունը մայրն է ամենայն չարյաց:

328. Ովքեր աստվածային սիրո հուրը իրենց անձերում վառելով բորբեցին՝ այնտեղի հեշտություններին մնաք բարով առաջին:

329. Ով անսահման խիստ է և բաշկացող, չի կարող որևէ մեկին աշակերտ և կանքի ընկեր ունենալ:

330. Հանդիմանելը ամենիքն չէ, այլ միայն նուանց, ովքեր իշխում են:

331. Ով իմաստուն է, միշտ կյանքի ծանրության հոգսն ունի, մահվան որոգայքը, գեհենի սպառնալիքը և այս հոգսի տակ հալում է՝ հանապազ տանջվում: Իսկ ով մտածող չէ, չի հավատում աներկյուղներին և երեւելիներով զբաղված չարիք է խորհում և գործում:

332. Բոլոր հոգևոր և մարմնավոր առաքինությունների լրումն է Աստծուն միշտ աչքի առաջ ունենալը:

333. Կյանքում բայճալի է ոչ այլ ինչը, բայց միայն մարդու սեփական ժառանգությունը, որի մեջ ծնված և սնված են լինում, ինչպես մոր ստիճքները և հոր գութը, սույնպես և ժառանգորդի մտքում քաղցր է թվում իր ժառանգությունը:

334. Որտեղ առատանում է աստվածգիտության շնորհը, այնտեղ բազմանում է աստանայի մարտը:

329. Որ խիստ է բարկացող է անսահման ոչ կարել գոք ունել աշակերտ և կենակից:

320. Յանդիմանելն ոչ է ամենեցուն, այլ առ միայն, որոց իշխելն է:

331. Որ իմաստունն է, միշտ հոգս ունի զկենցաղու ծանրություն, զմահուան որոգայթն, զգեհեհնին սպառնալիքն, և յայս հոգս հալէ, տանջէ հանապազ: Իսկ որ ոչ է մտաւոր, ոչ հաստաւ աներևութիցն, և յերևելիս գրաւեալ՝ խորհի զշարիս և գործէ:

332. Ամենայն հոգևոր և մարմնաւոր առաքինութեան լրումն է զԱստուած առաջի աշաց տեսանել միշտ:

333. Է բաղձալի ի կենացս ոչ այլ ինչ բայց միայն սեպհական ժառանգություն առն, յորում ծնեալ և սնեալ լինի, զի որպէս զստինս մօր և զգոյթ հօր, սոյնպէս և բաղցր թունցեալ լինի ի միտս ժառանգորդին զժառանգություն իր:

334. Ուր առատանայ զշնորհ գիտութեան Աստուծոյ, անոր բազմանայ և մարտն Սատանայի:

335. Այս է թշնամոյն¹¹ մարտ. կամ յուսահատութեամբ անհաւատութիւն ձգէ կամ յուսով անխտրություն մեղաց և ի հեշտություն:

336. Ոչ է բաական տեսական առաքինություն առ ի կատարումն, թէ ոչ ունիցի զգործնականն ընթացակից:

337. Տէրն և Արարիչն մեր տնօրինեաց մեզ, զի Աստուած գոյով եղև մարդ, և մեծն՝ վասն մեր նուաստ, և թագաւորն՝ վասն մեր աղքատ, և Տէրն տիեզերաց՝ ձեռք վասն մեր կալեալ, և բարձրութեանց լերանց տիրողն՝ վասն մեր պրկեալ և ձաղեալ, և ծովու տիրողն՝ վասն մեր կաթի ջրոյ կարտեալ, և ցամաքի տեղծողն՝ վասն մեր ի տոյն ամփոփեալ:

338. Արդարն ոչ անուամբ ազգի պարծի, այլ գեղեցիկ վարութ անձինն իրոյ փառաւորի:

339. Ոչ է պարտ մինչև ցմահ զմեզ յաղթող համարել կամ զՍատանայ՝ յաղթեալ, զի ոչ է միանգամ մարտն, որ վճարի, այլ առ յապայ է թշնամին և բազմապատիկ մեքենայսն:

340. Յիշելոյ են երախտիքն Աստուծոյ ի փառս նորին և պակասութիւնս մեր առ ի խոնարհեցուցանելոյ զմեզ:

341. Եթէ բնակեալ իցես յաշխարհի և միտս բարիս ունիցիս ոչ վնասեցէ զքեզ աշխարհն, իսկ թէ բնակիցես յանապատի և միտս բարիս ոչ ունիցիս չօգտեցուցանէ զքեզ անապատն:

342. Զնուէրս աշխարհականաց որպէս ընկալցոք մեր՝ բահանայքս միայնկանայն ասէ, թէ քիրաւորս և հազարաւորս տալցեն Աստուծոյ ի ձեռն մեր պտուղս, ոչ բնա մեզ զպարտական արարին, այլ ինքեանք պարտական գոյով Աստուծոյ նմին հաւտոցին զսական և առ նա ակնկալցին փոխարինին և ոչ ի ձեռն մեր:

343. Թէ հանես ի սրտէ զնախանձ եղբօրն քո, ընկալցի Աստուած զպատարագն քո, ապա թէ ոչ՝ ձգեսցես զնա ի դուրս քո, և այնպիսի պատարագն ոչ է հաճոյ Աստուծոյ:

344. Գործք աղտեղիք խղճի մտաց չարչարեն զմարդ և տրտմութիւն առնեն սրտից մարդկան:

345. Վշտանան հոգիք նախախղճանելոցն վասն յետնորդացն անարժանից որպէս և մեծատունն վասն եղբարցն:

¹¹ Զեռ. թշնամամոյն:

335. Այս է թշնամու մարտը, կամ հուսամատությամբ անհավատության
է ձգում, կամ հույսով՝ մեղքերի անխտրության և հեշտության:

336. Առաքինության տեսական կատարումը բավական չէ, եթե գործ-
նականը ընթացակից չունենա:

337. Տերը և Արարիչը տնօրինեց մեզ, որովհետև Աստված լինելով՝
մարդ եղավ, և մեծը՝ մեզ համար նվաստ, թագավորը՝ մեզ համար աղքատ,
տիեզերքի տերը՝ մեզ համար կախնված, լեռների բարձրություններին տիրո-
ղը՝ մեզ համար պրկված և ծաղրված, ծովին տիրողը՝ մեզ համար ջրի կա-
թիլի կարտած, և ցամաքի ստեղծողը՝ մեզ համար սույնի մեջ ամփոփված:

338. Արդարը դասակարգի անվամբ չի պարծենում, այլ իր անձի գեղե-
ցիկ վարքով է փառավորվում:

339. Պետք չէ մինչև մահը մեզ հաղթող համարել կամ սատանային՝
հաղթված, քանզի մարտը մեկ անգամ չէ, որ վարձատրվի, այլ թշնամին
հավիտյան է և բազմապատիկ են (նրա) մեքենայությունները:

340. Հիշելու արժանի են Աստուծո երախտիքները նրա փառքի համար
և մեր պակասավորությունը՝ մեզ խոնարհեցնելու նպատակով:

341. Եթե բնակված լինես աշխարհում և բարի միտք ունենաս, աշ-
խարհը քեզ չի վնասի, իսկ եթե բնակվես անապատում և բարի միտք չու-
նենաս, անապատը քեզ օգտակար չի լինի:

342. Ասում է. «Աշխարհականների նվերները ինչպես պետք է ընկա-
լենք մենք՝ համայն քահանաներս, եթե մեր միջոցով բյուրավոր և հազարա-
վոր պտուղներ տրվեն Աստծուն, մեզ երբեք պարտական չեն դարձնում,
այլ իրենք պարտական լինելով Աստծուն հատուցեցին քիչը և Նրանից թող
ակնկալեն փոխարենը և ոչ թե մեր միջոցով:

343. Եթե սրտիցդ հանես քո եղբոր նկատմամբ (եղած) նախանձը,
Աստված կընդունի քո պատարագը, ապա թե այն քեզնից դուրս չձգես, այդ-
պիսի պատարագը հաճելի չի լինի Աստծուն:

344. Խղճմտանքի աղտեղի գործերը չարչարում են մարդուն և տրտմու-
թյուն են պատճառում մարդկանց սրտերին:

345. Նախաժախճանվողների հոգիները վշտանում են անարժան հեռ-
նորդների պատճառով, ինչպես մեծատունը՝ եղբայրների պատճառով:

346. Ով կտրի վարձկանի վարձը, թող արյունահանների հետ դասա-
կարգվի:

347. Ժամանակ կա, որ բարին հաղթում է ճշմարտությանը, քանզի լրտե-
սը ե՛րբ կարող է ճշմարիտն ասել և վնաս պատճառել իր առաքողներին:

348. Աստված ամենայն բարյաց շնեմարան է, բայց տալիս է ժամանա-
կին և կարիքի պահին, որպեսզի (բարիքը) դուրագլուտ լինելով չարհա-
մարհիլի:

349. Ամեն ինչ, որ Աստուծո դեմ է՝ չար է:

350. Ամեն ոք, որ ըստ Աստուծո կամքի գործ է կատարում, որտեղ և
կատարի, այնտեղ նրան բացված կլինի երկնքի դուռը:

351. Եթե հարստությունը մեղք է, Աստծուց ստափել ով է հարուստ-
երկինքն ու երկիրը նրանց է, բայց բոլոր տրված է մարդկանց բարիքնե-
րի համար, եթե աղքատները ողորմելու արժանի են, երանելի են հարուստ-
ները, որոնք կերակրում են նրանց, եթե այս բանում մարդ կրթվի, կմանավի
Աստծուն, որովհետև բազում մեծատուններ Աստծուն և հրեշտակներին ի-
րենց հարկի տակ հյուրասիրությամբ ընդունեցին:

346. Որ հատանէ զվարձ վարձկանի ընդ արինահանսն համարեացի:

347. Է ժամանակ, զի բարին յաղթէ ճշմարտութեան. զի լրտեսն ե՛րբ կարէ զճշմարիտն ասել և վնաս առնել առաքողացն իրոց:

348. Ծոնմարան է Աստուած ամենայն բարեաց, բայց տայ ի ժամանակի և ի կարօտութեան, զի մի դիրագիտն արհամարհեացի:

349. Ամենայն ինչ, որ ընդդէմ Աստուծոյ է չար է:

350. Ամենայն ոք որ ըստ կամացն Աստուծոյ գործ գործէ, յորում տեղոջ և գործէ. անդ բացեալ լինի մնա դուռն երկնից:

351. Զի թէ մեծութիւն մեղք է, քան զԱստուած ո՛վ է մեծատուն. երկինք և երկիր նորա են, բայց զամենայն ի պէտս մարդկան տուեալ են, թէ՛ ողորմելի են աղքատք, երանելի են մեծատունք, որք կերակրեն զնոսա. եթէ յայս կրթի ոք, մնանէ Աստուծոյ, զի բազում մեծատունք զԱստուած և զհրեշտակս ընկալան ի տունս իրեանց հիւրասիրութեամբ:

352. Տէր և իշխան է մարդ ի վերայ գործոց իրոց, զի զոր և կամի և խոկայ զնոյնն և գործով կատարէ, եթէ բարի, և եթէ չար:

353. Արդ, ի գլխատրեղո զհաւատս զհանն մարմին խոստովանեմք և զմարմնոյ բնութիւն ընդ նմին անճառ միացեալ ի կուսական յարգանդին և ի կրելն զկիրս մարդոյ ոչ առանձինն ի Բանէն, այլ ճարտարապետաւ Բանին վարեցաւ յամենեսեան մարդկութիւն Աստուած գոլով համանգամայն և մարդ:

354. Արդարախօս լինելն մարդոյ լերկուց կողմանց օգուտ է մին՝ զի ինքն Աստուծոյ նման լինի, և միւս՝ ևս զընկերին թերահաւատութիւն բառնայ ի մտաց նորա:

355. Զիք բարի, զոր չիցէ արարեալ Տեսնն և չիք չար, զոր չիցէ ի նմա մասն Սատանայի:

356. Որպէս օգուտ են դեղ բժշկացն նոյնպէս և՛ մխիթարութիւն բարեկամաց:

357. Եթէ զբազումս խրատես ով մարդ և ընդէ՛ր զքեզ ոչ խրատես:

358. Ամենայն մարդոյ ոչ միայն տարի և ամիս այլև օր և ժամք թոռով սահմանեալ են, զի ոմանք ի խոր հիւանդութենէ և ի նաւաբեկութենէ և ի վախից մղեալ ապրեցան, և կէսք առողջ գոլով յանկարծակի մահացան, և այս ոչ պատահարք, այլ ըստ սահմանի Արարչին:

359. Բարոտք է մարդկան համեստ լեզուի և օգտակարք են սանձք քերանոյ և պիտանացոյ են ճաշակք բանից:

360. Պայծառ և պարկեշտ է ամուսնութիւն, բայց առաւել պայծառ է ստացուածն կուտութեան:

(Ճարունակելի)

352. Մարդն իր գործերի վրա տեր և իշխան է, որովհետև ինչ որ կամենում է, նույնը խորհում և գործով կատարում է՝ թե՛ բարին և թե՛ չարը:

353. Արդ, որպես հավատքի սկիզբ Բանը մարմին ենք խոստովանում և մարմնի բնությունը նրա հետ անճառաբար միացած կուսական արգանդում, և մարդկային կրքեր կրելու ժամանակ [մարմինը] բաժանված չէ Բանից, այլ ճարտարապետ Բանի միջոցով ամեն ինչի մեջ գործեց մարդկությունը՝ համանգամայն Աստված և մարդ լինելով:

354. Մարդու համար արդարախոս լինելը երկու կողմից օգուտ է. նախ որովհետև ինքն Աստծուն է նմանվում և մյուս՝ ընկերոջ մտքից վերացնում է թերահավատությունը:

355. Բարի չկա, որ Տիրոջ կողմից ստեղծված չլինի, և չկա չար, որ նրանում սատանայից մաս չլինի:

356. Ինչպես օգուտկար են բժիշկների դեղերը, այնպես և՛ բարեկամների մխիթարությունը:

357. Ո՛վ մարդ, եթե շատերին խրատում ես, ինչու քեզ չես խրատում:

358. Յուրաքանչյուր մարդու ոչ միայն տարին և ամիսը, այլև օրը և ժամերը թվով սահմանված են, քանզի ոմանք խոր հիվանդությունից, նավաբեկությունից և վախից մղվելով ապրեցին, կես առողջ լինելով հանկարծակի մահացան, բայց սրանք պատահարներ չեն, այլ [լինում են] ըստ Արարչի սահմանածի:

359. Մարդկանց (համար) բարվոր է համեստ լեզուն և օգտակար են բերանի սանձերը, նաև պիտանացու է խոսքերի գեղեցկությունը:

360. Ամուսնությունը պայծառ և պարկեշտ է, բայց առավել պայծառ է կուսության ժառանգությունը:

(Շարունակելի)